Կ Ա Ր Ծ Ի Ք

ՀՀ ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿԵԲԵՐ ՔՎԱՐՑԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կարծիքի կազման համար հիմք են հանդիսացել ՀՀ Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի ուսումնասիրման երկրաբանական աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ նյութերը, որոնք ներկայացվել են լիազոր մարմին և անցել են համապատասխան պետական ընդերքաբանական փորձաքննություն, վերջինիս՝ փորձաքննության հիման վրա ընդունված որոշումները («Հանրապետական երկրաբանական ֆոնդ»-ի կայքից՝ www.geo-fund.am), ինչպես նաև ընդերքօգտագործման ոլորտում գործող օրենսդրական փաստաթղթերը (www.arlis.am):

Ուսումնասիրված և քննարկվող փաստաթղթերն են.

1. Հաշվետվություն ՀՀ Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի 2006-2008թթ. համալիր երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների մասին՝ պաշարների հաշվարկմամբ, 20.12.2008թ. դրությամբ (երեք հատորով) // Գեոթիմ ՓԲԸ, հեղ. Հ. Ալոյան և ուր.: Եր.: ՀՀ ՀԵՖ, 2008: Ինվենտար համար - 6595 (այսուհետ՝ Հաշվետվություն 2008):

2. Հաշվետվություն ՀՀ Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկու հանքավայրում 2007-2010թթ. երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ՝ 01.01.2011թ. դրությամբ պաշարների հաշվարկմամբ (ութ հատորով) // Գեոթիմ ՓԲԸ, հեղ. Հ. Ալոյան և ուր.: Եր.: ՀՀ ՀԵՖ, 2011: Ինվենտար համար - 6739 (այսուհետ՝ Հաշվետվություն 2011):

3. Հաշվետվություն ՀՀ Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի Էրատո տեղամասում 2007-2013թթ. կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների մասին՝ 01.09.2013թ. դրությամբ կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմամբ և պաշարների հաշվարկմամբ (վեց հատորով) // Գեոթիմ ՓԲԸ, հեղ. Հ. Ալոյան և ուր.: Եր.: ՀՀ ՀԵՖ, 2013: Ինվենտար համար - 6843 (այսուհետ՝ Հաշվետվություն 2013):

4. Որոշում № 211 – 23.02.2009 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի և պաշարների հաստատման մասին // ՀՀ ԷԲՊՆ ՕՀՊԳ // 25 էջ:

5. Որոշում № 309 – 16.09.2011 «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի և պաշարների հաստատման մասին» ՀՀ ՕՀՊԳ-ի 23.02.2009 №211 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին// ՀՀ ԷԲՊՆ ՕՀՊԳ // 33 էջ:

6. Որոշում № 360 – 11.12.2013 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի Էրատո տեղամասի կոնդիցիաների պարամետրերի և պաշարների հաստատման մասին // ՀՀ ԷԲՊՆ ՕՀՊԳ // 34 էջ:

Իրավական փաստաթղթեր.

1. ՀՀ օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովի (ՀՀ ՊՊՀ) Որոշում № 86 – 12.12.2000 Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի

արդյունաբերական գնահատման և կոնդիցիաների պարամետրերի հիմնավորման նյութերի բովանդակության, ձևավորման և պետական փորձաքննության ներկայացման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին (այսուհետ՝ Որոշում 86):

2. ՀՀ Կառավարության Որոշում № 1784-Ն – 09.12.2004 Հետախուզված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննության կարգը հաստատելու մասին (այսուհետ՝ Որոշում 1784-Ն):

3. ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի Հրաման № 120-Ն – 14.12.2009 ՀՀ ԷԲՊՆ աշխատակազմի ՕՀՊԳ պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին (այսուհետ՝ Հրաման 120-Ն):

4. ՀՀ Կառավարության Որոշում № 274-Ն – 14.03.2013 Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային պաշարների դասակարգումը հաստատելու և ՀՀ Կառավարության 1998 թվականի փետրվարի 9-ի № 80 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (այսուհետ՝ Որոշում 274-Ն):

5. ՀՀ Կառավարության Որոշում № 243-Ն – 21.03.2013 Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2306-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (այսուհետ՝ Որոշում 243-Ն):

ՀՀ Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի երկրաբանական ուսումնասիրությունները՝ ներառյալ երկրաբանահետախուզական աշխատանքները, պաշարների հաշվարկումն ու հանքավայրի արդյունաբերական գնահատումն, իրականացվել են 2006-2013թթ. ընթացքում «ԳԵՈԹԻՄ» ՓԲԸ (Լիդիան Արմենիա) կողմից: Աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններն անցել են պետական ընդերքաբանական փորձաքննություն:

Բացի լիազոր մարմնին փորձաքննության ներկայացրած հաշվետվություններից և դրանց կից փաստաթղթերից, ընկերությունն ունի նաև իր տեխնիկական առաջադրանքներով միջազգային ներդրողների համար կազմված օտարալեզու մի շարք հաշվետվություններ և այլ փաստաթղթեր: Այդ նյութերն հասանելի են, օրինակ, Լիդիան ինթերնեյշնլի կայքում (https://www.lydianinternational.co.uk/projects/amulsar): Հաշվի առնելով վերջիններիս մեծ ծավալը, լիազոր մարմին ներկայացված նյութերի հետ կազմման ժամկետների, մեթոդաբանությունների տարբերությունները և, որպես արդյունք, նյութերում օգտակար հանածոների և տեխնիկատնտեսական ցուցանիշների որոշ դեպքերում առկա անհամապատասխանությունները, այդ փաստաթղթերն այս կարծիքում չեն քննարկվում:

Ընկերության գրասենյակում կատարվել է նաև ծանոթացում նմուշարկման մատյանների հետ, որտեղ հստակ ամրագրված են բոլոր նմուշներում, բացի ոսկուց և ածրաթից, ուղեկից տարրերի պարունակությունների պարզաբանման նպատակով իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքները մոտ 30 տարրերի մասով:

Հանքավայրի շահագործման հանձման հետ կապված այսօր շրջանառվում են բազմաթիվ կարծիքներ, եզրակացություններ և հարցադրումներ, դրանցից սույն կարծիքում ցանկանում եմ անդրադառնալ հանքավայրի հանքաքարում ոսկուց և

արծաթից բացի ուղեկից տարրերի առկայությանը, դրանց ուսումնասիրությանը և արդյունքներին, ինչպես նաև որոշ երկրաբանական առանձնահատկությունների:

Երկրաբանակառուցվածքային առանձնահատկություններ

Հանքավայրում իրականացված երկրաբանական ուսումնասիրությունների երեք հաշվետվություններում հեղինակները, հանքավայրի շրջանի երկրաբանակառուցվածքային առանձնահատկությունների ընդհանուր բնութագրի նկարագրության հետ միասին, առանձին գլխով նկարագրում են իրենց կողմից իրականացված աշխատանքները և դրանց արդյունքում ստացված տվյալներով Ամուլսարի հանքավայրի երկրաբանակառուցվածքային առանձնահատկությունները (տե՛ս Հաշվետվությունների 1-ին հատորների 2-րդ և 3-րդ գլուխները): Հանքաքարի և հանքպարունակող ապարների նյութական կազմը բերվում է վերցված նմուշների միներալոգիական-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների հիման վրա: Սուլֆիդային միներալների (պիրիտ, խալկոպիրիտ) առկայություն նկարագրված են Էրատո տեղամասի առանձին նմուշներում (Հաշվետվություն 2013, Հ.1, էջ 30-48):

Չխորանալով հաշվետվություններում ներկայացված հանքավայրում տարածված ապարների նկարագրության մեջ, հարկ եմ համարում նշել, որ թթու և միջին թթվայնության ապարների տարատեսակները դրանք հրային ծագման ապարների տեսակներ են, որոնց դասակարգումն ըստ թթվայնության իրականացվում է ապարներում SiO_2-ի պարունակությամբ և սա բնավ կապ չունի այդ նույն ապարների լվացման հետևանքով հնարավոր թթվային ջրերի ձևավորման հետ: Վերջինս հնարավոր է տարբեր կազմի ապարներում սուլֆիդային (հանքային) միներալների առկայության և դրանց քայքայման պարագայում:

Ուղեկից բաղադրիչների ուսումնասիրություններ

Հանքային մարմնի ձևաչափը, ոսկու տեղաբաշխման առանձնահատկությունները բաժնում առանձին պարբերությամբ (Հաշվետվություն 2008, Հ.1, էջ 48) անդրադարձ է կատարված ուղեկից տարրերին, նշելով, որ երկրաքիմիական բազմատար հետազոտությունների արդյունքում պարզվել է ոսկու բարձր պարունակություններին ուղեկցող Ag (1-4 գ/տ), Cu, As, Sb, Bi, Pb, Mo, Ba տարրերը: Էրատո տեղամասում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների բնութագրում նշվում է ISP մեթոդով Al, As, Ba, Be, Bi, Ca, Cd, Co, Cr, Cu, Fe, K, Mg, Mn, Mo, Na, Ni, P, Pb, S, Sb, Sr, Ti, V, W, Zn տարրերի համար շարքային նմուշների լաբորատոր վերլուծությունների մասին (Հաշվետվություն 2013, Հ.1, էջ 51): Սակայն նշված և ուսումնասիրված այլ տարրերի պարունակությունների թեկուզ տատանման սահմանների, դրանց նշանակության գնահատման մասին ոչինչ առկա չէ: Ուղեկից տարրերի լաբորատոր հետազոտությունների արդյունքները պատշաճ ձևով ամրագրված են ընկերությունում վարվող նմուշարկման մատյաններում, որոնք ցավոք լիազոր մարմնի պահանջի բացակայությամբ, առնվազն որպես լրացում չեն ավելացվել ներկայացված հաշվետվությունների հավելվածներին:

Ուղեկից տարրերի ուսումնասիրությունների մասին փորձաքննության ներկայացված հաշվետվություններում հեղինակները խոսում են նաև 4-րդ գլուխներում, որոնք վերաբերվում են հանքաքարի որակական կազմի և տեխնոլոգիական հարցերին: Հաշվետվություն 2008, աղյուսակ 4.2-ում (Հ.1, էջ 91-92) բերված է տեխնոլոգիական նմուշի բաղադրակազմը: Չնայած նրան, որ հեղինակներն այստեղ կրկին փաստում են

ուսումնասիրված մոտ 30 ուղեկից տարրերի ոչ արդյունաբերական նշանակությունը, սակայն չի կարող աչքի չընկնել տեխնոլոգիական նմուշում պղնձի 3.7 % (37000 գ/տ) բավականին նշանակալի պարունակության առկայությունը (1 գ/տ = 1 ppm = 0.0001 %): Հատկանշական է նաև այն, որ նմանատիպ մեկ այլ աղյուսակ էլ բերված է Հաշվետվություն 2011-ում՝ կրկին աղյուսակ 4.2 Տեխնոլոգիական նմուշի բաղադրակազմը (Հ.1, էջ 72-73), որտեղ սակայն պնդձի պարունակությունն այլ է, իսկ 37000 գ/տ պարունակության արժեքը գրված է երկաթի դիմաց: Նման ձևով տարբերվում են մի քանի տարրերի պարունակություններ, իսկ հիմնական մասի մոտ տվյալներն անփոփոխ են: Կա ենթադրություն, որ այս երկու աղյուսակներում ներկայացված է միևնույն նմուշի փորձարկման արդյունքները: Ցավոք սա հիմք է հանդիսանում 4.2 աղյուսակում բերված տվյալների ոչ արժանահավատության, դրանցում պատահական սխալների կամ անճշտությունների առկայության կասկածի համար:

Անհասկանալի և անընդունելի է հեղինակների կողմից հաշվետվության մեջ միայն մակերևույթային հետախուզափորվածքների նմուշարկման մատյանից շարքային նմուշների անալիզների արդյունքների քաղվածքի ներկայացումը, որտեղ երևու են ուղեկից տարրերի մասով արված ուսումնասիրությունները (Հաշվետվություն 2008, Հ.1, Հավելված 7): Նույն սկզբունքով հեղինակները հաշվետվության հավելվածում կարող էին ներկայացնել քաղվածք հորատանքերի նմուշների անալիզի արդյունքներից ուղեկից տարրերի բազվածքով:

Ընկերության կողմից ուղեկից տարրերի ոչ արդյունաբերական նշանակության հիմնավորումը կարելի է համարել զուտ մետալուրգիական փորձարկման արդյունքում առաջարկվող տեխնոլոգիական սխեմայով այլ տարրերի կորզման հնարավորության պրակտիկորեն բացակայությունը:

Հանքավայրի բարդության աստիճանը

Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքայնացումը ներկայացված է երակիկացանավոր հանքայնացմամբ մեծ չափերի շտոկվերկային հանքային մարմիններով: Նման տիպի հանքայնացմամբ և հանքային մարմիններով ներկայացված հանքավայրերը սովորաբար դասվում են երկրաբանական բարդության երկրորդ խմբին: Սակայն հաշվի առնելով Ամուլսարի հանքավայրում օգտակար բաղադրիչի պարունակության բաշխվածությունը՝ որակի փոփոխականության աստիճանը (շատ անհավասարաչափ, այլ ոչ թե անհավասարաչ, ինչպես նշում են հեղինակները), հանքավայրը ճիշտ է դասել երրորդ՝ շատ բարդ երկրաբանական կառուցվածք ունեցող հանքավայրերի խմբին: Հանքավայրում ոսկու պարունակությունների տատանման (վարիացիայի) գործակիցը տատանվում է մեծ սահմաններում՝ միջինում կազմելով 150%: Երրորդ խմբի բարդության աստիճան ունեցող հանքավայրերի պաշարները, գործող կանոնակարգերով, ընդունված է հաշվարկել C_1 և C_2 կարգերով (տե՛ս Որոշում 274-Ն):

Երկրաբանատնտեսագիտական գնահատում, պաշարների հաշվարկ

Հանքավայրի տեղամասերի պաշարների հաշվարկման համար սահմանվել և հիմնավորվել են համապատասխան կոնդիցիոն պարամետրերը՝ կողային պարունակություն, թույլատրելի առավելագույն հզորություններ և այլն:

Հանքաքարի արդյունահանման և վերամշակման ծախսերն ըստ էության չեն գերազանցում 10 $/տ սահմանագիծը, ոսկու ներկայիս մոտ 40 $/գ գնի դեպքում պարզ

հաշվարկներով կարելի է պատկերացում կազմել հանքավայրի դրական արդյունաբերական նշանակության մասին:

Հանքային մարմնի եզրագծման համար կողային (եզրագծային) պարունակության որոշումն ըստ էության կատարվել է նվազագույն արդյունաբերական պարունակության հաշվարկման հիման վրա: Վերջինս սովորաբար հանդիսանում է կոային պարունակությունների սահմանման վերին սահման, իսկ ստորին սահմանը որոշվում է տեխնոլոգիական պրոցեսի թափոններում մնացող պարունակություններով: Ամուլսարի հանքավայրի հանքաքարերից ոսկու կորզման արդյունքում թափոններում (մնացուկներում) մնում է 0.1 գ/տ-ից ցածր պարունակություններ, իսկ կողային պարունակության համար ընդունված է նախ 0.15 գ/տ, այնուհետև 0.2 գ/տ պարունակությունները: Հաշվարկված նվազագույն արդյունաբերական պարունակությունը տատանվում է 0.2 – 0.3 գ/տ սահմաններում, իսկ հաշվարկված և հաստատված պաշարներում ոսկու միջին պարունակությունը մեծ է 0.7 գ/տ-ից: Սա միանշանակ փաստում է հանքավայրի արդյունաբերական մեծ արժեքի և հաշվեկշռային պաշարների հակապես արժեքավոր ենթախմբի պատկանելիությունը:

Իմ կարծիքով այդքան էլ հիմնավորված չէ ՀՀ ՕՀՊԳ առաջարկությունը և ընկերության կողմից 0.15 գ/տ կողային պարունակության փոխարինումը 0.2 գ/տ պարունակությամբ, և, վերջինիս իրականացման նպատակով մեկ հորիզոնի համար իրականացված համեմատական վերլուծությունը, հատկապես այն պատճառով, որ կոյային պարունակության բարձրացմամբ պայմանավորված հանքաքարում ոսկու միջին պարունակության փոփոխությունը աննշան է ի տարբերություն ոսկու պաշարների էական փոփոխության դեպի նվազում:

Հետախուզական աշխատանքների մեթոդիկան, համար ընտրված հետախուզացանցը և հանքավայրի բարդության աստիճանը բավարարում են C_1 և C_2 կարգի պաշարների հաշվարկման համար: B կարգի պաշարների հաշվարկման համար ոչ այնքան հիմնավոր խոչընդոտ կարող էր հանդիսանալ նաև հանքավայրի սակավաթիվլեռնային փորվածքներով, այն էլ միայն մակերեսում, ուսումնասիրման հանգամանքը:

Վերջնական հաշվարկման և որոշումներով հանքավայրում հաստատվել են միայն հաշվեկշռային պաշարներ:

Եզրակացություններ և առաջարկություններ

Հանքավայրի ուսումնասիրման որոնողահետախուզական աշխատանքներում ընկերության կողմից իրականացվել է շարքային նմուշներում մոտ 30 ուղեկից տարրերի լաբորատոր հետազոտություններ: Հաշվետվություններում ուղեկից տարրերի ուսումնասիրման արդյունքների ամփոփումը լրոզված է, անհասկանալի է դրանց ոչ արդյունաբերական նշանակության գնահատականները և առհասարակ դրանց պարունակությունների կարգերը հանքաքարերում: Արժանահավատ չէ նաև հաշվետվություններում ներկայացված միասնական տեխնոլոգիական նմուշների քիմիական բացաղրամասերի վերաբերյալ ուղեկից տարրերի պարունակությունների մասով տեղեկատվությունը:

Հետազոտությունների արդյունքները պատշաճ մակարդակով գրանցված են նմուշարկման մատյաններում, սակայն դրանք բացակայում են փորձաքննության ներկայացված հաշվետվություններում (ներկայացված է միայն մակերևութային փորվածքների մասով):

Ընդերքաբանական փորձաքննության ժամանակ փորձաքննող մարմինը պաշարների հաստատման և նյութերի փորձաքննության ընթացքում պետք է ուշադրություն դարձներ ուղեկից տարրերի ուսումնասիրմանը, դրանց արդյունաբերական կամ ոչ արդյունաբերական նշանակությունների գնահատմանը: Փորձաքննական մարմնի որոշումներում, արձանագրություններում և մասնագիտական եզրակացություններում ուղեկից տարրերի մասով ցավոք ոչինչ չի նշվում:

Առաջարկվում է լիազոր մարմնին ընդերքօգտագործողից պահանջնել, որպես լրացում նախկինում ներկայացված նյութերի, ուղեկից տարրերի ուսումնասիրման մասով ամբողջական նյութերը և ընթացակարգերին համապատասխան իրականացնել դրանց ընդերքաբանական փորձաքննությունն և եզրահանգումներ, իսկ նյութերը կցել արդեն իսկ ֆոնդում առկա հաշվետվություններին:

Հանքավայրի շահագործման նախագծում անհասկանալի է հետևյալ միտքը. Սկզբնական շրջանում արտահաշվեկշռային հանքաքարերը կուտակվելու են լցակույտերում, այնուհետև տարրալվացման աշխատանքների սկսելուց որոշակի ժամանակ անց, երբ ետ կգնեն իրենց կապիտալ ներդրումները, այդ հանքաքարերը տարվելու են տարալվացման հարթակ և նրանցից նույնպես ոսկին կորզվելու է: Հարց, եթե պաշարների հաստատման որոշումներում հաշվարկված բոլոր պաշարները հաշվեկշռային են, ապա ընկերությունը այդ ի՞նչ պաշարներ է պատրաստվում սկզբնական էտապում տեղափոխել ժամանակավոր լցակույտեր:

Առաջարկվում է նաև պատասխանատու մարմիններին ուշադրություն դարձնել հետևյալ հարցերի վրա.

- Ամուլսարի կույտային տարալվացման հարթակը ադսորբցիոն-դեսորբցիոն վերականգնման հանգույցով, դատարկ ապարների և ոչ կոնդիցիոն հանքաքարերի լցակույտերը, և մյուս բոլոր կառույցները անցել են արդյոք համապատասպան փորձաքննություն, և հատկապես դրանց մեջ առաջինը, որպես տեխնիկապես վտանգավոր օբյեկտի: Որքանով են պահպանված, որպես տեխնիկական վտանգավոր օբյեկտի շուրջ սանիտարական գոտիների սահմանները, առնվազն գործող պահանջներին համապատասխան:
- Լեռնահանքային արդյունաբերության համալիրի սեյսմիկ ակտիվության գնահատումը որքանո՞վ է համապատասխանում իրականությանը:

Միջազգային լավագույն փորձի ներդրմանն ուղղված Հայաստանում համապատասխան քաղաքականության մշակմանը և ընդերքօգտագործման ոլորտի օրենսդրական դաշտի բարելավմանն ուղղված առաջարկություններ.

1. Ընդերքօգտագործման օրենսգրքում անհրաժեշտ է հստակ տարանջատել հանքայնացումների (հանքավայրերի) երկրաբանական ուսումնասիրման (որոնում, հետախուզում, երկրաբանատնտեսագիտական գնահատում) թույլտվությունների տրամադրումն առանց դրանց հետագա արդյունահանման նպատակների:
2. Արդյունահանման նպատակով ընդերքի ուսումնասիրման իրավունքը կարող է տրամադրվել ընդերքօգտագործողին միայն հաստատված պաշարներով հանքավայրերում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և հանքի շահագործման աշխատանքների նախագծի կազմման նպատակներով:

3. Ընդերքօգտագործման ոլորտում գործող մի շարք օերնսդրական փաստաթղթեր ունեն վերանայման կարիք, դրանցում առկա այլ փաստաթղթերի հետ հակասությունների շտկման նպատակով:

4. Ընդերքաբանական փորձաքննության իրականացման կանոնակարգերը վերանայել և այն պարտադիր սահմանել ոչ միայն կոնդիցիոն պարամետրերի և պաշարների հաստատման, այլև ամբողջական երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների և ընդերքօգտագործման հայտի մաս կազմող և կից փաստաթղթերի փորձաքննության համար:

5. Հանքավայրերի քաղաքակիրթ շահագործում՝ որոշակի տարեկան արտադրողականությամբ, համաչափ և ռացիոնալ, կոմպլեքսային և բարձր ցուցանիշներով կորզման ապահովում՝ հարստացման տեխնոլոգիաների պարտադիր փորձաքննությամբ, տարատեսակ ապրանքային արդրատեսակների ստացմամբ:

6. Վերանայել ընդերքօգտագործման ոլորտում հարկային քաղաքականությունը, բարձրացնել ռոյալթիների տոկոսները, փոխել ռոյալթիների գոյացման հաշվարկման մեխանիզմները շահույթից դեպի ընդերքից արդյունահանված օգտակար հանածոների քնակի՝ անկախ նրանց կորզման կամ կորստի դեպի թափոններ:

7. Սահմանել ՀՀ տարածքում մշակման չթույլատրվող հանքավայրերի տիպերի, արդյունահանման եղանակների, հանքաքարերի որակի և նրանց մշակման տեխնոլոգիաների, ինչպես նաև շահագործման ենթակա հանքավայրերի պաշարների նվազագույն չեմեր:

8. Շրջանառության մեջ մտցնել ընդերքօգտագործման գործունեության ընթացքում հնարավոր վթարների հետևանքների պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը:

9. Հանքավայրերի և լեռնային ձեռնարկությունների շուրջը, որպես վտանգավոր տեխնիկական արտադրական օբյեկտների, հարկավոր է օրենքով կազմակերպել սանիտարապաշտպանիչ գոտիներ՝ սահմանելով նրանց հստակ չափերը: Նման որոշման ժամանակ հաշվի են առնվում ձեռնարկության հզորությունը, շահագործման պայմանները, սահմանափակ տարածքում օբյեկտների խտությունը, շրջակա միջավայր արտամղվող թունավոր և հոտավետ նյութերի, ստեղծվող աղմուկի, տատանումների և այլ վնասակար գործոնների բնույթն ու քանակությունը:

10. Առաջարկվում է հանքի շահագործման թույլտվության տրամադրման հիմքում օրենքով սահմանել նաև ապահովագրական գրավի գաղափարը, որն անհրաժեշտ կլինի օգտագործել շրջակա միջավայրին հասցված վնասների օպերատիվ վերացման և ազդեցության նվազեցման համար: Հանքի փակման ծրագրին համապատասխան ներկայումս հաշվարկվող և գանձվող գումարները չեն երաշխավորում և չեն համապատասխանում իրական պահանջվող գումարներին:

Հարություն Մովսիսյան

Երկրաբանական գիտությունների թեկնածու, դեցենտ
ԵՊՀ Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ
Կայուն զարգացման կենտրոնի (ԵՊՀ) փորձագետ

27.08.2018թ.